

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ»
Դրամաշնորհի N	Լոտ 1. Երևան - Աջափնյակ և Դավթաշեն
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.2022 - 31.12.2022թթ.
Հաշվետու ժամանակահատված	01.01.2022 - 31.03.2022թթ.
Ներկայացման օր	07.04.2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Զուլիա Հովհաննիսյան Թիմ լիդեր, սոցիալական աշխատող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության տրամադրում, այդ թվում՝ պոլիկլինիկայից դեղորայքի ստացում,
- ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպում:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը

- Սոցիալական աջակցության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 131 կարիքի գնահատում և վերագնահատում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացված տունայցերի ընթացքում աջակցություն է տրամադրվել թվով 131 շահառուի, ներառյալ 23 դեպքի վարման իրականացում.
 - վերափաստագրում կամ փաստագրում ընտանեկան նպաստի համակարգում
 - ավանդի ձեռքբերման կազմակերպում
 - վերականգնողական օժանդակ միջոցի ստացման համար ՎԱԾ-ի ձեռքբերում
 - վերականգնողական օժանդակ միջոցի ստացման կազմակերպում
 - նոր անձնագրի ստացման կազմակերպում
 - կենսաթոշակի վճարման նոր համակարգի գործարկման արդյունքում թոշակի ստացման իրավունքից զրկված շահառուների իրավունքի վերականգնում
 - անվճար բուժհետազոտման կազմակերպում:Իրականացվել է 9 ուղղորդում, 35 միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Կազմակերպության տնային սպասարկման ծառայությունից օգտվելու համար դիմած պոտենցիալ 5 շահառուների ուղեգրման գործընթացի կազմակերպում: Պոլիկլինիկայից անվճար դեղորայքի ստացման համար յուրաքանչյուր ամիս 4 շահառուների համար ՄՄԾ-ից անապահովության տեղեկանքի ձեռքբերում:
- Հոգեբանական աջակցության շրջանակում անհրժեշտության դեպքում շահառուներին տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն: Հոգեբանի կողմից 7 շահառուի հետ իրականացվել է անհատական աշխատանք: Անհատական հոգեբանական աշխատանքն ուղղված է եղել շահառուների հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայության ձևավորմանը և/կամ պահպանմանը և այլն:
- Իրավական աջակցության շրջանակներում շահառուների շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների մասին: Իրավաբանական խորհրդատվություն է իրականացվել 5 շահառուի համար:

- Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայություններ է տրամադրվել 101 շահառուի: Հիմնվելով գնահատված կարիքների և շահառուի ինքնասպասարկման կարողությունների գնահատման վրա՝ շահառուներին տրամադրվել են հետևյալ ծառայությունները՝ աջակցություն անձնական հիգիենայի պահպանման հարցում, աջակցություն բնակարանի մաքրության պահպանման հարցում, աջակցություն գնումների իրականացման հարցում, անհրաժեշտության դեպքում ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխան այլ վայր:
- Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում տունայց է իրականացվել 131 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկման, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 13 շահառուի համար բուժքրոջ կողմից կազմակերպվել է պոլիկլինիկայից դեղորայքի ստացում և փոխանցում շահառուին, ինչպես նաև թվով 2 շահառուի ուղեկցում բժշկական հաստատություններ:
- Ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 3 միջոցառում, որին մասնակցել է թվով 12 շահառու:
 - Հանդիպում քահանայի հետ
 - Տիառնընդառաջին նվիրված միջոցառում
 - Երևանի քաղաքապետարանը Կանանց միջազգային օրվա առիթով հաճելի անակնկալ էր մատուցել մեր շահառուներին՝ տրամադրելով տոնական միջոցառումների հրավիրատուներ, որի շրջանակներում էլ շահառուները մասնակցեցին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը Հայաստանի պետական կամերային և սիմֆոնիկ նվագախմբերի Կանանց միջազգային օրվան նվիրված համերգին

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Համացանցում տեղադրվել է մեկ տեսանյութ, որը ներկայացնում է տարեցների սպասարկումը տնային պայմաններում (տե՛ս հետևյալ հղումով <https://www.facebook.com/armgovernment/videos/394767832404329>)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում միակ խնդիրը, որին բախվել է Աջափնյակի և Դավթաշեն համայնքը սպասարկող թիմը, դա շահառուների միջոցառումների ներգրավման մեջ է. թագավարակի պայմաններում, շահառուները առանց այդ էլ ունենալով տեղաշարժման խնդիրներ՝ հրաժարվում են մասնակցել մշակութային միջոցառումներին:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալական աջակցության տրամադրում,

- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության տրամադրում, այդ թվում՝ պոլիկլինիկայից դեղորայքի ստացում,
- ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպում:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ծրագրի նպատակներին հասնելու համար կազմակերպությունն աշխատակազմի համար սկսել է թրեյնինգների շարք, որոնք նպատակ ունեն բարելավելու աշխատակազմի կարողություններն ու գիտելիքները:

Աջափնյակ և Դավթաշեն համայնքները սպասարկող թիմի բոլոր անդամները մասնակցել են «Հոգեկան առողջության խնդիրները՝ որպես սոցիալ-առողջապահական ոլորտի մարտահրավեր» կարողությունների զարգացման 2 հանդիպումների:

Հոգեբանը մասնակցել է «Հոգեբանական անհատական խորհրդատվության բազային հիմքերը» հանդիպում-քննարկմանը:

Հաշվետու ժամանակակա հատվածում «Առաքելություն Հայաստան» կազմակերպության կողմից նախաձեռնվել է հանդիպում Միասնական սոցիալական ծառայության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև գործընկեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ուղղված կառավարության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերի շրջանակներում շահառուների ուղեգրման ընթացքում առաջացող դժվարություններին: Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ համագործակցության և առկա խնդիրների հաղթահարմանն ուղղված մեխանիզմների մշակման հետ կապված հարցեր:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
<div data-bbox="177 1525 592 1574">_____</div> <div data-bbox="252 1538 478 1574">(ստորագրություն)</div> <div data-bbox="604 1503 770 1570">Ս.Մուրադյան Կ. Տ.</div>	<div data-bbox="876 1525 1276 1574">_____</div> <div data-bbox="951 1538 1177 1574">(ստորագրություն)</div> <div data-bbox="1289 1503 1474 1570">Ե.Մխիթարյան Կ. Տ.</div>